ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2023թ. թիվ 208-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 95-րդ հոդվածի 2-րդ մասը, 96-րդ հոդվածի 1-ին մասը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի նոյեմբերի 30-ի N 3245-Ա հրամանը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հաստատել 2023 թվականին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանով հաստատված տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության հարցաշարերով:

3. Անհրաժեշտության դեպքում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

5. Աշխատանքային խմբի ղեկավար, մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ա.Սահակյանին՝

1) Յուրաքանչյուր համայնքում իրավական և մասնագիտական հսկողությունն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում հսկողության արձանագրությունը և արդյունքները ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

2) Եռամսյա պարբերականությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել տեղեկատվություն հսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ:

3) Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման արդյունքում կազմված արձանագրությունը, խախտումները վերացնելու վերաբերյալ համայնքի ղեկավարին ներկայացված առաջարկությունները, ինչպես նաև հսկողության վերաբերյալ համայնքի ղեկավարի ներկայացրած առարկությունները մեկամսյա ժամկետում հրապարակել մարզպետի աշխատակազմի ինտերնետային պաշտոնական կայքում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

25/05/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. մայիսի 25
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2023թ. մայիսի 25-ի
թիվ 208-Ա որոշման

2023 թվականին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի համայնքներում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

հ/հ	*Համայնքի անվանումը*	*Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ժամանակահատվածը*	*Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը*	*Իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք*	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	*Անուն, ազգանուն*
1.	Ալավերդի	2-րդ եռամսյակ	ՏԻՄ-երի լիազորություններ	ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի ավագ մասն.	Արմեն Շահվերդյան
			ֆինանսներ	հաշվապահական հաշվառման բաժնի պետ	Արտավազդ Բեջանյան
				ֆինանսատնտեսա-գիտական բաժնի պետ	Նունիկ Ասրյան
				ֆինանսատնտեսա-գիտական բաժնի գլխավոր մասնագետ	Դավիթ Թամարյան
			հողօգտագործում	հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ	Էդգար Հախվերդյան
				հողաշինության և հողօգտագործման բաժնի ավագ մասն.	Դավիթ Ստեփանյան
			առողջապահություն	առողջապահության բաժնի պետ	Լուսինե Վարդանյան
			սոցիալական պաշտպանություն	սոցիալական ապա-հովության բաժնի գլխավոր մասնագետ	Իրինա Գրիգորյան
				Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունք-ների պաշտպանության բաժնի ավագ մասն.	Անի Ղազարյան
			պաշտպանություն	Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ	Արմեն Հակոբյան
			կոմունալ տնտեսություն	քաղաքաշինության վարչության ճարտարա-պետաշինարարական բաժնի ավագ մասն.	Հայաստան Տեր-Պողոսյան
			քաղաքաշինություն	Ճարտարապետաշինա-րարական բաժնի պետ	Լևոն Հախինյան
			տրանսպորտ	տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի ավագ մասն.	Վահրամ Դանիելյան
			առևտուր և ծառայություններ	բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ	Սամվել Խառատյան
			շրջակա միջավայրի	բնապահպանության	Սամվել

			պահպանություն	բաժնի գլխավոր մասնագետ	Խառատյան
			գյուղատնտեսություն, անասնաբուժություն և բուսասանիտարիա	գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ	Արմեն Գասպարյան
			զբոսաշրջություն	զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ	Անի Բաղդասարյան
			կրթություն	կրթության բաժնի գլխավոր մասնագետ	Անահիտ Բարոյան
			մշակույթ	մշակույթի և սպորտի բաժնի ավագ մասն.	Մանուշակ Քոչարյան
			երիտասարդության հետ տարվող աշխատանքներ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ	մշակույթի և սպորտի բաժնի ավագ մասնագետ	Ռուբեն Մխիթարյան
2.	Գյուլագարակ	4-րդ եռամսյակ	ՏԻՄ-երի լիազորություններ	ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի պետ	Վարդան Հովհաննիսյան
			ֆինանսներ	հաշվապահական հաշվառման բաժնի պետ	Արտավազդ Բեջանյան
				ֆինանսատնտեսա-գիտական բաժնի պետ	Նունիկ Ասրյան
				ֆինանսատնտեսա-գիտական բաժնի գլխավոր մասնագետ	Դավիթ Թամարյան
			հողօգտագործում	հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ	Էդգար Հախվերդյան
				հողաշինության և հողօգտագործման բաժնի ավագ մասն.	Դավիթ Ստեփանյան
			առողջապահություն	առողջապահության բաժնի պետ	Լուսինե Վարդանյան
			սոցիալական պաշտպանություն	սոցիալական ապահովության բաժնի ավագ մասնագետ	Վաղարշակ Եղիազարյան
				Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունք-ների պաշտպանության բաժնի ավագ մասն.	Անի Ղազարյան
			պաշտպանություն	Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ	Արմեն Հակոբյան
			կոմունալ տնտեսություն	քաղաքաշինության վարչության ճարտարա-պետաշինարարական բաժնի ավագ մասն.	Հայաստան Տեր-Պողոսյան
			քաղաքաշինություն	քաղաքաշինության վարչության ճարտարա-պետաշինարարական բաժնի ավագ մասն.	Հայաստան Տեր-Պողոսյան
			տրանսպորտ	տրանսպորտի և ճանապարհաշինության	Վահրամ Դանիելյան

				բաժնի ավագ մասն.	
			առևտուր և ծառայություններ	բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ	Սամվել Խառատյան
			շրջակա միջավայրի պահպանություն	բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ	Սամվել Խառատյան
			գյուղատնտեսություն, անասնաբուժություն և բուսասանիտարիա	գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ	Արմեն Գասպարյան
			զբոսաշրջություն	զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ	Անի Բաղդասարյան
			կրթություն	կրթության բաժնի գլխավոր մասնագետ	Անահիտ Բարոյան
			մշակույթ	մշակույթի և սպորտի բաժնի ավագ մասն.	Մանուշակ Քոչարյան
			երիտասարդության հետ տարվող աշխատանքներ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ	մշակույթի և սպորտի բաժնի ավագ մասնագետ	Ռուբեն Մխիթարյան

Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում նախատեսված արձանագրությունների կազմման, լրացված հարցաշարերի խմբավորման, խմբագրման, պահանջվող տեղեկատվության փաստաթղթաշրջանառության և մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում տեղադրվելիք նյութի տրամադրման աշխատանքների պատասխանատու նշանակել մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Գոհար Բաղդասարյանին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

25/05/2023

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ